Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«25» մարտի 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ Նարեկ Արմենի Սուքիասյանի «Կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ (հայ-ռուսական հարաբերությունների օրինակով, 2008-2020 թթ.)» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հաստատված է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Քաղաքագիտության ամբիոնի 2022 թ. մարտի 24-ի նիստում: Նիստին մասնակցում էին փ. գ. թ., դոցենտ Հ. Լ. Սարգսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ս. Մանուկյանը, ք.գ.դ., պրոֆեսորի պ/կ Վ. Ս. Դավթյանը, ք.գ.թ., ավագ դասախոս Ն. Ա. Դունամալյանը, ք.գ.թ, դոցենտ Ա. Ռ. Հարությունյանը, դասախոս Ն. Ի. Մարգարյանը:

Նարեկ Արմենի Սուքիասյանի «Կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ (հայ-ռուսական հարաբերությունների օրինակով, 2008-2020 թթ.)» թեկնածուական ատենախոսությունն արդիական և գիտագործնական կարևորություն ունեցող ուսումնասիրություն է: Այն որոշակի ներդրում է թեմայի հետազոտման հայրենական ջանքերում՝ հաշվի առնելով դրա տեսամեթոդական ուղղվածությունը, առարկայի ընտրությունը և ժամանակագրական ընգրկումը:

Ատենախոսական աշխատանքում քննարկվել են այն չափումները և գործոնները, որոնց էվոլյուցիան պայմանավորել է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության վերափոխման գործընթացները, ինչը թույլ է տվել հեղինակին քարտեզագրել արտաքին քաղաքական գործընթացները չափող փոփոխականների հնարավորինս լիարժեք ամբողջությունը: Նման մոտեցումը հնարավոր է դարձել տեսամեթոդական գործիքակազմի կիրառմամբ՝ նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի հայեցակարգերի համատեղման արդյունքում: Հատկանշական է, որ դրանց համադրական կիրառումը ու ադապտացումը ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության համար ինքնին գիտական նորույթ է: Աշխատանքում ներկայացվել և քննվել են օգտագործված հայեցակարգերի առանցքային մոտեցումները, ներհայեցակարգային բանավեճերն ու դրանց վերաբերելիությունը ուսումնասիրվող առարկայի հանդեպ: Ներկայացված հետազոտության շրջանակում Ն. Սուքիասյանը վերլուծել է «ենթադաշնակցում», «սպառնալիքի բալանսավորում» և «արտաքին քաղաքական նորմ» հասկացություններն ու դրանց կիրառելիությունը ՀՀ արտաքին քաղաքականության հետազոտման համատեքստում:

Դիտարկվել է ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը պայմանավորող չափումների ձևավորումը և էվոլյուցիան ԽՍՀՄ կազմալուծումից ի վեր: Ուշագրավ է Ն. Սուքիասյանի կողմից այդ չափումների կատեգորիզացումն ու համակարգումը՝ ըստ գործոնների ներազդման մակարդակների: Հիմք ընդունելով

հետազոտության արդյունքները՝ հեղինակը ներկայացրել է արտաքին սպառնալիքի պայմաններում գործող փոքր պետության սպառնալիքի հավասարակշռման ռազմավարությունների վերլուծությունն ու հիմնավորել այն վարկածը, որ փոքր պետությունը ձգտում է դաշնակցել մեծ տերության հետ ընդդեմ մի այլ առավել մեծ սպառնալիք հանդիսացող մեծ տերության, և այդ հարաբերությունները ձեռք են բերում ենթադաշնակցման ձևաչափ: Բացի այդ, աշխատանքը ներկայացնում է փոքր պետությունների արտաքին ու դաշինքային քաղաքականությունների առանձնահատկությունները:

Ներկայացված աշխատանքի առաջին գլխում՝ «Ատենախոսության տեսա-մեթոդական հիմքերը», քննվում են օգտագործված երկու հայեցակարգային մոտեցումները՝ կառուցվածքային ռեալիզմն ու կոնստրուկտիվիզմը՝ ցույց տալով դրանց վերաբերելիությունը պետության արտաքին քաղաքականության առնչվող գործընթացների ուսումնասիրման խնդրում: Հեղինակը ներկայացրել է կառուցվածքային ռեալիզմի ծագումը, բանավեճերը, ներհայեցակարգային տեսական ճյուղավորումները: Ն. Սուքիասյանը վերլուծել է փոքր պետությունների վարքագծի մի քանի այլընտրանք. ենթադաշնակցում, մեծ տերության միջոցով վերջիններիս հաշվին (free-riding) բալանսավորում, մեծ տերության միջոցով կռվելու հնարավորություն, թույլ պետություններին դաշնակցում և միայնակ կռվելու ընտրություն:

Կոնստրոկտիվիզմի հայեցակարգի շրջանակում հեղինակը վեր է հանել հայեցակարգի քաղաքագիտական մեկնաբանությունները և ներկայացրել ըստ դրա՝ պետությունների արտաքին ու դաշինքային քաղաքականության ուսումնասիրության հարցում կարևոր սոցիալական իրականության տարրերն ու գործընթացները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ արտաքին քաղաքականության կառուցվածքային չափման էվոլյուցիան (ՀՀ-ՌԴ հարաբերությունների օրինակով)» գլխում հեղինակը կառուցվածքային ռեալիզմի միջոցով սահմանվել է ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը պայմանավորող կառուցվածքային

չափման գործոնների երեք մակարդակներ՝ ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային-ենթահամակարգային, գլոբալ-համակարգային: Սպառնալիքների հավասարակշռման հայեցակարգի միջոցով հեղինակը վերլուծել է ՀՀ արտաքին սպառնալիքները՝ ըստ հարձակողական-պաշտպանողական կարողությունների հարաբերակցության դինամիկայի և աշխահագրական մերձավորության գործոնների: Երկրորդ գլխի երկրորդ և երրորդ ենթագլուխներում Ն. Սուքիասյանը ներկայացնում է ՀՀ դաշինքային քաղաքականության էվոլյուցիան 2008 թ. ռուս-վրացական պատերազմի և 2016 թ. Ապրիլյան պատերազմի արդյունքում՝ մինչև Արցախյան երկրորդ պատերազմը: Այստեղ նույնպես անդրադարձ է կատարվում ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային-ենթահամակարգային, գլոբալ-համակարգային մակարդակներում կառուցվածքային գործոններին, սահմանվում դրանց խթանող կամ սահմանափակող ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա: Հեղինակը ներկայացրել է երկու պատերազմների հետևանքով առաջ եկած ներքին մոբիլիզացիոն կարողությունների և արտաքին կախվածությունների խոցելիությունը, տարածաշրջանային ուժերի և սպառնալիքների բալանսավորման դինամիկան, և գլոբալ՝ մանսավորապես Ռուսաստան-կոլեկտիվ Արևմուտք հարաբերությունների հարացույցը՝ որպես գործոններ, որոնց ուղիղ կամ անուղղակի ներազդեցության արդյունքում փոփոխության է ենթարկվում ՀՀ արտաքին քաղաքական մանրերականությունը, ամրապնդվում կամ առավել խոցելի է դառնում դաշինքային քաղաքականությունը:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ արտաքին քաղաքականության կոնստրուկտիվիստական չափման էվոլյուցիան (ՀՀ-ՌԴ հարաբերությունների օրինակով)» գլխում ներկայացվում են ՀՀ գործադիր ինստիտուտի արտաքին քաղաքականության պատասխանատու կառավարող էլիտաների ընկալումները, ինքնությունները դավանած նորմերը և կոնստրուկտիվիստական չափման նման գործոնների ազդեցությունը կառավարող էլիտաների վարած արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա: Հեղինակը ներկայացնում է

կառավարող էլիտաների ընկալումները աղրբեջանաթուրքական սպառնալիքների, դրանց հակազդման Հայաստանի կարողությունների և հայ-ռուսական դաշինքային ակնկալիքների մասին՝ «Ղարաբաղ» շարժումից մինչև 2020 թ. Արցախյան Երկրորդ պատերազմ: Ցույց է տրված այն էվոլյուցիան, թե ինչպես է արտաքին սպառնալիքների աճի և Ռուսաստանի տարածաշրջանային կարևոր դերակատարության մասին պատկերացման ամրապնդման արդյունքում էլիտայի ընկալումներում ուրվագծվում հայ-ռուսական հարաբերությունների դաշինքային բնույթը: Հեղինակը ցույց է տալիս 2008 թ. և 2016 թ. տարածաշրջանային պատերազմների, ինչպես նաև որոշ ձևով 2018 թ. Թավշյա հեղափոխության արդյունքում, ու այդ ժամանակաշրջանում լարվածության և սպառնալիքների մակարդակի փոփոխությամբ «խմբագրվել» կառավարող էլիտայի պատկերացումները՝ բյուրեղացնելով նրանց դաշինքային սպասելիքները անվտանգային տարբեր համատեքստերում:

Ատենախոսությունը, բնականաբար, զերծ չէ որոշ թերություններից: Անհրաժեշտ ենք համարել առանձնացնել հետևյալ դիտողությունները.

1. Հարց է առաջանում, որքանով է արդյունավետ առանձին ներկայացնել նեոռեալիստական և կոնստրուկտիվիստական մոտեցումները ՀՀ արտաքին քաղաքականության հետազոտության մեջ, երբ հեղինակը, շարժվելով այս կամ այն տեսության չափումներով, տարանջատում է երևույթների տարբեր մակարդակներ (նեոռեալիզմի դեպքում հիմնականում հիշատակվում են արտաքին գործոնները, կոնստրուկտիվիզմի՝ հայկական էլիտաների մոտեցումները):

2. Առաջին գլխում հեղինակը ներկայացնում է կառուցվածքային ռեալիզմի և կոնստրուկտիվիզմի զուտ տեսական մոդելները անկախ ՀՀ-ՌԴ հարաբերություններից: Այդ իսկ պատճառով ճիշտ կլիներ «ՀՀ-ՌԴ դաշինքային հարաբերություններ» բառակապակցությունը պարզապես չձևակերպել առաջին գլխում:

3. Աշխատության որոշ մասերում առկա է իրադարձությունների բավականին մանրամասն նկարագրություն (էջ 52-54, 57-58, 67-68), ինչից կարելի էր խուսափել:

4. Ցանկալի կլիներ աշխատանքում դիտարկել

ա/ ՀՀ և ՌԴ ռազմավարական փաստաթղթերում տեղ գտած նեոռեալիստական և կոնստրուկտիվիստական մոտեցումների անդրադարձ,

բ/ ռուսաստանյան քաղաքական էլիտայի արտահայտված դիրքորոշումները և ռազմավարության հիմքերը, որոնք մնում են «արտաքին» աշխատության բուն բովանդակության համար և քիչ ուսումնասիրված,

գ/ 2008-2018 թթ. հայ և ռուս հասարակությունների սոցիալ-քաղաքական տրամադրությունների ազդեցությունը հայ-ռուսական հարաբերությունների վրա:

դ/ ատենախոսության վերջում մի փոքր անդրադառնալ հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանը 2020 թ. պատերազմից հետո, ինչը թույլ կտար նաև հիմնավորել որքանով է ընտրված մեթոդաբանությունը թույլ տալիս համարժեք նկարագրել և բացատրել ուսումնասիրվող հարաբերությունների զարգացումը: Խորհուրդ ենք տալիս հեղինակին հետագա հետազոտություններում դա անել:

5. Թեև հեղինակը ներկայացնում է օգտագործված գրականության բավականին մեծ ցանկ, սակայն ռուսերեն և հայերեն լեզվով բուն գիտական հոդվածները խիստ սակավ են և չեն ներկայացնում հատկապես ռուսաստանցի հեղինակների մոտեցումները նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի կիրառելիության հարցում (Ա. Բոգատուրով, Պ. Ցիգանկով, Ա. Ցիգանկով, Տ. Ալեքսեևա, Օ. Կուդրյաշովա, Ն. Սիլան, և այլոք): Կարելի էր նաև օգտագործել որոշ այլ հայ հեղինակների գործերը՝ Վ. Դավթյան, Է. Էլբակյան և այլոք:

6. Նորույթը կարելի էր ներկայացնել առանձնացված կոնկրետ կետերով:

7. Ատենախոսության մեջ կան հղումներ ատենախոսի կողմից Ռ. Նազարյանի հետ անցկացված հարցազրույցին: Ցանկալի կլիներ, որ հարցազրույցի սղագրությունը կցվեր իբրև հավելված:

Ատենախոսության մեջ ներկայացված եզրակացությունները հիմնավոր են և պատճառաբանված, որոնց վավերականությունը ապահովված է մեթոդական ապարատի հետևողական և ճշգրիտ կիրառմամբ: Հեղինակը հաջողությամբ բավարարել է ատենախոսության սահմանված արդիական նպատակը և հանգամանորեն հասցեագրել առաջադրված բոլոր խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է դրա հիմնական դրույթները և համապատասխանում աշխատանքի բովանդակությանը: Ն. Սուքիասյանի հեղինակած հոդվածները ունեն գիտագործնական նշանակություն և նույնպես արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Նարեկ Արմենի Սուքիասյանի «Կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ (հայ-ռուսական հարաբերությունների օրինակով, 2008-2020 թթ.)» թեմայով՝ ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Ատենախոսը, հաջող պաշտպանության պարագայում, արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Սարգսյան/

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու /Ռ. Կասաբաբովա/